առաջարկով 2200 կտորե բաղկացած օսմաներեն այբուբենը նվազեցուց 1600 կտորի։ Այս առիթով ան արժանացավ երկու շքանշաններու։ Հանրապետության հաստատումեն վերջն ալ պարգևատրվեցավ «Կրթական մետալ» (Մաարիֆ մատալյասը) շքանշանով (1923)։

Թուրքիո մեջ առաջին թղթադրամը տպագրած է Ռաֆայել Գազանճյանը (1842)։ Ան մեծ ծառայություններ մատուցած է ծովայիններու բարձրագույն ուսումնարանի վիմատիպ քարտեզներու կաղապարներու փորագրության, նոր թղթադրամներու կաղապարներու փորագրության և տպագրության գործին։ Այս առիթներով և Պետական փողերանոցի մեջ ալ կատարած իր ծառայություններուն համար արքունական հրամանագրով[3] մը պարգևատրված է «Բարձր շքանշանով» (Նշանը Ալի)։

Մյուհենտիսյանի մահեն վերջ Մաթեոսյանն ալ թուրքերեն նոր տառեր ձուլած և կաղապարները պատրաստած է։ Նշված անձնավորություններեն զատ աչքառու դեմք մը եղած է Ճանիկ Արամյանը, որ 19 տարի Փարիզ ապրած և հոն ունեցած է իր տպարանը։ Ան ստեղծած է 73 տեսակ հայերեն գիրեր։ Կ. Պոլիս վերադառնալուն պես նշանակված է Արքունի տպարանի տնօրեն (1865)։

Թուրքիո մեջ պատի օրացույցներու հղացումը տպարանատեր Գեորգ Զարդարյանին կը պատկանի։ Մինչև իր մահը (30 մայիս 1880) այլ և այլ լեզուներով պատի օրացույցներ տպագրող Զարդարյանը պատրաստած է նաև Օսմանյան պետության գունավոր և շատ մեծ չափով՝ 24 կտորներե կազմված մեկ քարտեզը։ Սիկարեթի թուղթ պատրաստող Կարապետ Պերպերյանը հղացած է Բեբա անունով քարտեզավոր սիկարեթի թուղթերը։ Կ. Պոլսի մեջ առաջին անգամ Միսաք Գոչունյանն (Քասիմ) է, որ իր հիմնած լրագրին մեջ տպած է եվրոպական առևտրական հաստատություններու գովազդերը (ռեքլամները)։ Գուտենբերգ տպարանի տեր Երվանդ Մսրլյանն ու գործընկերը Կ. Պոլսո մեջ առաջին անգամ պրակներով գիրք ծախելու սիստեմն են որդեգրած։ Պուլղարերեն գիրերը առաջին անգամ փորագրած և ձուլած է Թադեոս Տիվիթճյանը, որ ատկե զատ իր հնարած գիրերով տպագրած է բազմաթիվ պուլղարերեն գիրքեր։

Առաջին արհմիութենական շարժումները տպարանագործության ասպարեզին մեջ եղան բավական նշանակալից։ Հայ տպարանագործներու կողմե Կ. Պոլսո մեջ հիմնադրված են «Գրաշարներու ընկերու-

---

[3] Basbakanlik Arsivi (Վարչապետարանի արխիվ), Արտաքին գործերու հրամանագիրներ, 757, 4 փետրվար 1842։